ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԷՍ-2019/41, 25.03.2019թ.

Բողոք բերող անձ՝ ԱՁ Ջանիկ Սևոյան

Պատվիրատու՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցում / սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ներդրման ծառայությունների ձեռքբերում.

Բողոքի պահանջը՝

Չեղարկել ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով ընթացակարգը և պարտավորեցնել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին հրապարակել նոր հրավեր, որտեղ մեկ մրցույթի շրջանակներում տարբեր չափաբաժիններով կհայտարարի գնման առարկաների պահանջի մասին, ըստ օրենքի, այն է՝ տարբեր միջանցիկ կոդերով և ֆինանսական միջոցներով՝ այս կերպ պահպանելով օրենքը և կարգը:

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի

50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ Գնումների Բողոքարկման խորհրդին

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի

կողմից կազմակերպված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով մրցույթի մասնակից

անհատ ձեռնարկատեր ***Ջանիկ Սևոյանից***

ՀԿՀՀ 37488172

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ.Շահումյան, Գայի 8

Հեռ՝ 094800059

sevoyanjanik@gmail.com

Պատվիրատու՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Իսակովի 24

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01», համակարգչային ծրագիր

Դ Ի Մ Ում

Բողոքարկման խորհրդի հարգելի անդամ

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքին, որ սույն գործի վերաբերյալ իմ կողմից հերթական դիմում-բողոքը, բողոքարկման խորհրդին է ներկայացվել նաև 2018 թվականի ***հոկտեմբերի 22-ին և քննվել ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում*** *(կից ուղարկում եմ այդ բողոք-դիմումի պատճենը և խորհրդի որոշումը): Խնդրում նախկին բողոք-դիմումը և խորհրդի որոշումը, նույնպես կցել սույն բողոք-դիմումին և տեղեկատվությունը ընդունել ի գիտություն, և սույն բողոք-դիմումը համարել* 2018 թվականի ***հոկտեմբերի 22-ին*** *ներկայացված բողոք-դիմումի տրամաբանական շարունակությունը: Ընթերցել առաջին բողոք-դիմումը, որից հետո սույն բողոք-դիմումը):*

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՏԱՑ N 0-12987-19
«25» 03 2019թ.

2019 թվականի ***մարտի 5-ին*** *(2019-03-05 16:05:00-ից)* ՀՀ Ֆինանսների նախարարության գնումների համակարգում (*www.gnumner.am*) հրապարակվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար սարքերի կառավարման համակարգչային ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հայտարարություն և հրավեր մինչև 2019 թվականի ***մարտի 12-ը*** *(2019-03-12 09:15:00ժամը)* ներառյալ:

Ըստ սահմանվածի՝ 2019 թվականի մարտի 12-ին՝ մինչև ժամը 09:15-ը, ներկայացրել եմ մասնակցության հայտ: Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 09:15-ին, որի ժամանակ պարզ է եղել, որ գնման մրցույթի մասնակցիների թիվը երկուսն է: Հանձնաժողովի անդամները, բացելով ծրարները, արձանագրել են, որ ներկայացրել եմ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ, ներկայացրել եմ նաև ցածր գին, որի արդյունքում ճանաչվել եմ առաջին տեղ զբաղեցնող:

Ըստ սահմանված կարգի, հաջորդ օրը, մարտի 13-ին, ժամը 16:58:19-ին, հանձնաժողովի քարտուղարը տեղեկագրում (www.gnumner.am)-ում հրապարակել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի արձանագրություն և գրանցամատյան, իսկ 17:00:52-ին ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգի շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը:

2019 թվականի մարտի 13-ին՝ ժամը 15:38-ին, իմ էլ-հասցեին ուղարկվեց գրություն, այն մասին, որ, մեջբերում եմ.

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով՝ 1-ին չափաբաժնի համար 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ջանիկ Սևոյանը:

Հիմք ընդունելով՝

- *ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ առաջարկում ենք երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:*

Սահմանված ժամկետում ներկայացրել եմ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (տե՛ս հավելված 1):

2019 թվականի մարտի 19-ին՝ ժամը 16:32-ին, իմ էլ-հասցեին ուղարկվեց գրություն, այն մասին, որ, մեջբերում եմ.

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերում ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ և գնահատման նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով:

Հիմք ընդունելով՝

- *ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ՝ Կարգ) և ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19 կետը, առաջարկում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները.*
- *Կից ներկայացնում ենք 19.03.2019թ. թիվ 3 արձանագրությունը:*

Սահմանված ժամկետում ներկայացրել եմ, իրենց կողմից «գտնված», «անհամապատասխանությունների» վերաբերյալ գրություն (տե՛ս հավելված 2), որտեղ մանրամասն նշել եմ, այն փաստերը, ըստ որոնց, որակավորման չափանիշներում անհամապատասխանություններ չկան:

Սակայն հանձնաժողովն այս անգամ, նախորդ անգամվա պես (խոսքը 2018 թվականի հոկտեմբերի 22-ին, բողոքարկման խորհրդին տրված բողոք-դիմումի, ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի մասին է, որի շրջանակներում նույնիսկ բողոքը քննող մարմնի կողմից տրված նկատողությունները, իրենց նպատակին չեն ծառայել), դարձյալ, առանց իմ էլ-փոստին ծանուցում ուղարկելու, հրապարակում է կատարել (www.gnumner.am)-ում, ըստ որի՝ հանձնաժողովը որոշում է կայացրել մերժել «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ի հայտը և 45-րդ կետի համաձայն «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմնին:

Բողոքարկման խորհրդի հարգելի անդամ

Խնդրում այս պահից սկսած ամբողջապես ընթերցել հանձնաժողովի արձանագրություններ 3 և 4-ը (տե՛ս հավելված 3, 4), ինչպես նաև իմ՝ հանձնաժողովին ուղղված պատասխանը և որակավորման առնչվող փաստաթղթերը (տե՛ս հավելված 1,2): Հաջորդիվ մեջբերում եմ, արձանագրություններից և իմ պատասխանից հատվածներ:

Ըստ հանձնաժողովի արձանագրության N3-ի, իմ կողմից ներկայացված նմանօրինակ պայմանագիրը կատարվել է ժամկետների խախտմամբ և թերություններով: Սակայն, մեջբերում եմ.

Ա) Ինչպես երևում է «ՀՀ փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ա/Ձ Ջանիկ Սևոյանի միջև 2018 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Վերլուծական կամ գիտական համակարգչային ծրագրային փաթեթի ներդրման ծառայությունների մատուցման գնման» N ՀՀՓԿ-ԳՀԾՁԲ-(18/1-Ծ) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) N1 հավելվածում, ծառայության մատուցման ժամկետը նշված է «Մատուցման իրականացվում է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրվա ընթացքում», որը պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից (16.10.2018) հաշված 20-րդ աշխատանքային օրն է (05.11.2018): Նկատելի է նաև, որ երկկողմանի հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձման-ընդունման N01 արձանագրությամբ (պայմանագրի N2 հավելված) և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N 01 ակտով (պայմանագրի N 2.1 հավելված) նշված է, որ ծառայությունը մատուցվել է (հանձնվել է) 21.11.2018 թվականին:

Վերոնշյալ փաստաթղթերի հետ միասին նկատելի է նաև Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Համաձայնագիր N01-ը, որի առաջին կետից երևում է, որ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 02.11.2018 թվականին փոխվել է Ջանիկ Սևոյանի կարգավիճակը և նա «Ֆ/Ա Ջանիկ Սևոյան»-ից դարձել է «Ա/Ձ Ջանիկ Սևոյան» (Ֆ/Ա – ֆիզիկական անձ, Ա/Ձ- անհատ ձեռնարկատեր): Նույն այդ կետից երևում է, որ «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով կատարված փոփոխությունը, հաշվի առնելով Պայմանագրում նշված «Ֆ/Ա Ջանիկ Սևոյան» կարգավիճակը, և նկատի առնելով, որ Պայմանագրի հանձման-ընդունման, ավարտական ակտերում այլևս «Ֆ/Ա Ջանիկ Սևոյան» նշելը իրավաչափ չէ, 03.11.2018 թվականին (թիվ Ե-0571-գ գրություն, տե՛ս հավելված 2) դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն «Ա/Ձ Ջանիկ Սևոյան» կարգավիճակը Պայմանագրի հանձման-ընդունման, ավարտական ակտերում նշելու իրավական հիմքերը ստուգելու նպատակով:

«ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը 03.11.2018 թվականին դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն այն պարզ պատճառով, որ դրան նախորդած օրերին արդեն իսկ իմ կողմից մատուցված է եղել ծառայությունը և անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրի հանձման-ընդունման, և ինչպես Ձեր արձանագրությունում է նշված պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու ակտերը վավերացնելու:

Հարկ եմ համարում նշել, որ 2018 թվականի նոյեմբերի 3-ին, ՀՀ Ֆինանսների նախարարություն դիմելու օրվանից հաշված դեռ մի քանի օրացույցային օր հետո է լրանում նոյեմբերի 5-ը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20-րդ օրացուցային օրը, ինչը նշանակում է, որ ծառայությունը մատուցվել է մինչև նոյեմբերի 5-ը, և որ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 02.11.2018 թվականին իմ կարգավիճակի փոփոխությամբ և «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի 03.11.2018 թվականին ՀՀ ֆինանսների նախարարություն դիմելու հանգամանքներով է պայմանավորված եղել Պայմանագրի հանձման-ընդունման, ավարտական ակտերի վավերացման ժամանակավորապես դադարեցված լինելը, մինչ ՀՀ ֆինանսների նախարարություն կողմից պատասխանի ստացումը:

Ինչպես նշված է հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության N3-ի ա/-ի վերջին նախադասությունում, բնականաբար, «Ա/Ձ Ջանիկ Սևոյան»-ը չէր կարող ներկայացնել, որևէ փաստաթուղթ Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետի երկարաձգման վերաբերյալ, քանզի ծառայությունը մատուցված է եղել սահմանված ժամանակահատվածում:

Մյուս կողմից, հատուկ ուշադրություն եմ հրավիրում այն հանգամանքին, որ ՀՀ Ֆինանսների նախարարությունը «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին պատասխան գրությամբ դիմել էր նոյեմբերի 16-ին (տե՛ս հավելված 2.1), իսկ մեր՝ կողմերիս միջև համաձայնագիրը կնքվել էր նոյեմբերի 19-ին, այդ իսկ պատճառով փաստաթղթերում ծառայության մատուցման օր է նշվել 21.11.2018 թվականը:

Արդյունքում ստացվում է, որ իրավաբանական կարգավիճակների, փաստաթղթաշրջանառության, և շատ այլ իրավական ու գործընթացային խնդիրներից ելնելով ժամանակը նշված է 21.11.2018 թվականը, սակայն ծառայությունը, մատուցված է եղել դեռևս հոկտեմբերի 31-ից - նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում:

Որպես հավելում նշեմ, որ փաստաթղթային գործընթացը ծառայության մատուցման որակի հետ որևէ առնչություն չունի:

Բ) Հանձնաժողովի կողմից «գտնված» Պայմանագիր N1 հավելվածում ծառայության չափման միավորի՝ «դրամ»-ի և պայմանագրի արդյունքը պատվիատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N01 ակտում, ինչպես նաև 26.11.2018 թվականի դուրս գրված հաշիվ վավերագրում ծառայության չափման միավորի՝ «հատ»-ի անհամապատասխանությունը, վրիպակ է՝ ծառայության մատուցման որակի հետ որևէ առնչություն չունեցող:

Գ) Հանձնաժողովի կողմից մեկ այլ՝ «գտնված» ԱԱՀ-ի դիտարկումը, որը շրջանառվում է, ստորև գրվածից, մեջբերում եմ.

Պայմանագրի 4.1 կետում նշված մատուցման ենթակա ծառայության գինը՝ 2530000 (երկու միլիոն հինգ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, այն ինչ ներկայացված 26.11.2018 թվականի դուրս գրված հաշիվ վավերագրում ծառայության արժեքը նշվել է առանց ԱԱՀ-ի:

Սա այն պարզ գործողության արդյունքն է, որ մեկնաբանման կարիք չունի: Եթե Պայմանագրում գրված է գումարի չափը և նշված, որ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ հաշիվ վավերագրում ԱԱՀ-ի արժեքը նշված չէ, այստեղից հետևում է, որ տվյալ մասնակիցը ԱԱՀ դաշտից դուրս է և ըստ էության ԱԱՀ-ն, որպես այդպիսին 0 դրամ է: Այս կետը նույնպես ծառայության մատուցման որակի հետ որևէ առնչություն չունի:

Դ) Ինչպես երևում է երկկողմանի հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարած արդյունքների հանձման-ընդունման N01 արձանագրության առաջին էջում նշված N Բ4190754019 հաշիվ վավերագրի և իմ կողմից հանձնաժողովին ներկայացրած հաշիվ վավերագրի Բ9729911184 համարները տարբեր են, ընդ որում՝ առաջինը դուրս է գրված 21.11.2018 թ.-ին իսկ երկրորդը 26.11.2018 թվականին: Այստեղից հետևում է, որ 21.11.2018 թ.-ին դուրս գրված հաշիվ վավերագիրը, սահմանված կարգին համապատասխան խմբագրվել է 26.11.2018 թվականին, էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի համակարգում, որի արդյունքում ստացվել է հաշիվ վավերագրի նոր համար, որն էլ, իր հերթին, նախորդ ձևավորված համարի իրավահաջորդն է:

Վերոնշյալից պարզ է, որ որակավորման փաստաթղթերի ժամկետների անհամապատասխանությունը տեղի է ունեցել Ջանիկ Սևոյանի կարգավիճակի փոփոխմամբ և ՀՀ Ֆինանսների նախարարության գրության պատասխանի ուշացմամբ, սակայն վերոնշյալից փաստվում է, որ ծառայությունը մատուցվել է ժամկետներում և սույն հանձնաժողովը անտեսում է, այդ հանգամանքը, հաշվի չի առնում կցված փաստաթղթերը:

Ըստ հանձնաժողովի արձանագրություն N4-ի, սույն պատվիրատուն՝ իր հարցմանն ի պատասխան, «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացել է պատասխան, որ «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ը ժամկետների խախտմամբ է մատուցել ծառայությունը: Խնդրում եմ բողոքը քննող մարմնին պահանջել և գործին կցել վերոնշյալ պատասխանը, ինչպես նաև հարցում կատարել «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին, ըստ հետևյալ կետերի

- արդյոք «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ը պայմանագրով սահմանված ժամկետներում տեղադրել է համապատասխան ծրագիրը, այն է ծրագիրը տեղադրել է հոկտեմբերի 31-ից - նոյեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում,
- արդյոք նրա իրավական կարգավիճակի փոփոխմամբ, «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը դիմել է լիազոր մամնին՝ պայմանագրում, նրա հանձման-ընդունման և եզրափակիչ ակտերում «Ֆ/Ա Ջանիկ Սևոյան»-ը փոխարինելու «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ի,
- և արդյոք այդ հանգամանքով պայմանավորված է փաստաթղթերում ժամկետների շեղման խնդրի առկայությունը:

Վերոնշյալով պայմանավորված ի հայտ է գալիս, որ պատվիրատուն նպատակ ունենալով ինձ դուրս մղել գործընթացից, նպատակ չունի պարզելու գործի հանգամանքները, մատնված է անգործության, որի հետևանքով պետական բյուջեից լրացուցիչ գումարներ են վատնվում: (*Մրցույթի առաջին («Ա/Ձ Ջանիկ Սևոյան») և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների գնային առաջարկների տարբերությունը կազմում է **971 000 ՀՀ դրամ**, իսկ նախահաշվային գնից առաջին տեղ զբաղեցնողինը ցածր է **1 440 000** դրամով, իսկ երկրորդ տեղ զբաղեցնողինը՝ 469000 դրամով*)

Ինչպես նաև հանձնաժողովը արձանագրության N3 1.3 կետով, այն է կարգի 45-րդ կետի համաձայն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյան»-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմնին, ինչը սակայն կրկին փաստում է հանձնաժողովի, ոչ պրոֆեսոնալ աշխատանքի, օրենքների թերի ընկալման ունակությունները, այն է.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները

չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ

1. Բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Սակայն ըստ նույն այդ կարգի և օրենքի վերոնշյալ կետերի, «Անհատ ձեռնարկատեր Ջանիկ Սևոյանը» չի խախտել պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, հայտերը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացի հետագա մասնակցությունից, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չի եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, հետևաբար հանձնաժողովի որոշումը կրկին կամայական է, և նպաստում է պետական բյուջեի և համակարգի անտեղի վատնմանը:

Փաստացի, ինչպես նախորդ անգամ (խոսքը ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի գործի մասին է), այս անգամ նույնպես հանձնաժողովը կանխամտածված և միտումնավոր կերպով, բացարձակ սխալներով փորձում է ինձ դուրս մղել, գնման գործընթացից:

Ինչպես ներկայացրել էի նախորդ ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում, գնման պահանջը դադարեցնելու հիմնավորման մտացածին լինելը, այնպես էլ հիմա փաստացի ներկայացնում եմ այս գնմամբ, այդ նուն մտացածին լինելու հանգամանքը, այն է.

Այս՝«ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով մրցույթի և նախորդ «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրերը նույն են, և դեռ կազմման կոպտագույն խախտմամբ, այն է, հանձնաժողովի կողմից հաշվի չի առնվել բողոքը քննող մարմնի հորդորը առ այն, որ պետք է ծրագրի գնումը տարբերակվի ծրագրի ուսուցումից և ունենա տարբեր CPV դասակարգիչ: Սա փաստում է օրենքի և բողոքը քննող մարմնի նկատմամբ ունեցած անհարգալից վերաբերմունքի և անպատժելիության մասին: Այստեղ հարկ եմ համարում նշել, որ ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում բողոքը քննող անձը եկել էր հետևյալ եզրահանգման, այն է.

> *Չնայած այն հանգամանքին, որ ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմվել է մի շարք նորմերի խախտումներով, այնուամենայնիվ, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված գնման տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման, պատվիրատուի կարիքին համարժեք լինելու, իմպերատիվ պահանջներին առկայության պայմաններում, «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի հրավերով հաստատված տեխնիկական բնութագրին համապատասխան առարկայի ձեռքբերումը չի կարող համարվել արդյունավետ և օգտավետ Պատվիրատուի համար և կհանգեցնի նշված գնման պահանջի համար գնման պլանով նախատեսված ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործմանը, քանի որ Պատվիրատուն նման տեխնիկական հատկանիշներով առարկայի գնման պահանջ փաստացի չունի:*

Այսօր արդեն սույն «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով մրցույթի գործընթացում, պարզորոշ կերպով երևում է նախորդ «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում պատվիրատուի բողոքը քննող մարմնին մոլորության մեջ գցելը, անհիմն փաստեր ներկայացնելը, առ այն, որ ֆինանսական միջոցները արդյունավետ չեն օգտագործվում, որ նման տեխնիկական հատկանիշներով առարկայի գնման պահանջ չկա: Սույնը փաստարկված ցույց է տալիս, որ ոչ միայն գնման տնտեսում, արդյունավետություն և օգտավետություն չկա, այլև տեխնիկական հատկանիշներն են նույնը, միայն մեկ բացառմամբ, որ հանձնաժողովը անտեսելով ՀՀ կառավարության 13 ապրիլի 2017 թվականի N 390-Ն որոշումը «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ,

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳ»-ի մասին, նույն մրցույթի շրջանակներում, փաստացի կատարել է իրարից սկզբունքային տարբերություն ունեցող և տարբեր միջանցիկ կոդի ներքո նշվող առարկաների գնում: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 13 ապրիլի 2017 թվականի N 390-Ն որոշումը «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳ»-ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ կառուցվածքը, և ուսումնասիրելով Տեխնիկական բնութագիրը (տե՛ս հավելված 5)՝ հանգում ենք հետևյալին, որ

> Տեխնիկական բնութագրի (տե՛ս հավելված 5) առաջին մասից (1-20,22) պարզ է դառնում, որ այն ենթակա է 48000000 միջանցիկ կոդ ունեցող գնման, այն է՝ Համակարգչային ծրագրային փաթեթների և տեղեկատվական համակարգերի գնմանը, իսկ վերջին մասից (21)՝80000000 միջանցիկ կոդ ունեցող գնման, այն է Կրթական և վերապատրաստման ծառայություններ (տե՛ս հավելված 6):

Փաստացի այս դեպքը խոսում է, պատվիրատուի սխալ գնումների պլան կազմելու, հանձնաժողովի ոչ պրոֆեսիոնալ աշխատանքի, ինչպես նաև ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում բողոքը քննող մարմնի հորդորների, այն է տարբեր դասակարգիչներով գնում հայտատրելու հանգամանքի անտեսմանը:

Նշեմ նաև, որ ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում, բողոքը քննող մարմինը, ուսումնասիրելով «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգը, գտել էր, որ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը, ինչպես նաև Ընթացակարգի գնահատող հնձնաժողովը «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմելիս և հաստատելիս, թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի վկայակոչված՝ տեխնիկական բնութագրի մասով գնման հայտի կազմման, հրավերի տեքստի հաստատման համար սահմանող պահանջների խախտումներ, որի հետևանքով «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով ընթացակարգը՝նշված տեխնիկական բնութագրով գնման առարկայի գնման պահանջի վերացման պատճառով հայտարարվել է չկայացած:

Սույն «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով մրցույթի գործընթացում հանձնաժողովը, կրկին թույլ է տվել վկայակոչված պահանջների խախտումներ:

Այսօրինակ գործելաոճում առկա են այնպիսի տարրեր, որոնք թույլ են տալիս ենթադրելու, որ նախորդ անգամ, պատվիրատուն, մոլորության մեջ գցելով իր լիազոր մամնին, դադերեցրել է գնման պահանջը, այն դիտավորյալ վերաձևափոխել նույն իմաստի և տրամաբանության շրջանակներում, խոսքը, ի սկզբանե պարզ և ակնհայտ տերմինների

կրկնակի շարադրումների մասին է, որը կարող է քողարկել նախկին անգամվա գնման պահանջի սխալ հիմքով դադարեցված լինելը: Սա փաստում է նաև այն հանգամանքը, որ նախորդ անգամ պատվիրատուն տեխնիկական բնութագրում առանց համարժեք բառը նշելու գրել էր ծրագրի անվանումը, որը ցանկանում էր, իսկ այս անգամ գնման օրը՝ իմ հաղթող ճանաչվելուց անմիջապես հետո, հեռախոսազրուցի ընթացքում ցանկություն էր հայտնել նույն ծրագիրը ունենալու վերաբերյալ:

Ընդ որում հանձնաժողովի ուշադրությունն եմ հրավիրում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի վրա, <u>որը սահմանում է, որ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեքը, այն է՝</u>

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Ըստ վերոնշյալ օրենքի 1-ին մասի, պատվիրատուն իրեն վերապահված լիազորությունները «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» թերի է կատարել և ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում գնման պահանջի վերացման համար բերված միակ կախյալ կետը, բողոքը քննող մարմնին է ներկայացրել վերոնշյալ օրենքի 2-րդ մասը, այն է *գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում*, ինչը և «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով մրցույթում ցույց տվեց այս կետի անտեղի շահարկման և բողոքը քննող մարմնին մոլորության մեջ գցելու հանգամանքը:

Այս՝«ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով մրցույթի և նախորդ՝ «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրերը նույնը լինելու և միայն ձևականորեն, և կրկին բողոքը քննող մարմնին մոլորության մեջ գցելու համար կատարված մանիպուլիացնող հանգամանքները ներկայացնում եմ ստորև՝ մեջբերելով նախկին բողոք-դիմումից հատված՝ այն համեմատելով նոր տեխնիակակն բնութագրի առաջին մասի հետ:

Մեջբերում «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հոկտեմբերի 17-ի հանձնաժողովի նիստի արձանագրությունից

Տեխնիկական բնութագրում առկա է վրիպակ և փաստացի կազմվել է թերի՝ մասնավորապես, բացակայում են հետևյալ տեխնիկական պահանջները.

ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը),

բ) ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,

գ) ծրագրի տարեկան թարմացումները,

դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը,

ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն),

զ) ծրագրի բանալիների քանակը:

Համաձայն **Հայաստանի Հանրապետության կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 13-րդ կետի** այն է, *Պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից,* նշանակում է, որ հայտի կազմման փուլում, մասնագիտական խումբն է կազմել տեխնիկական բնութագիրը, որն էլ համաձայն **նույն որոշման 31-րդ կետի** հաստատել է գնահատող հանձնաժողովը՝ վերջինիս կազմմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Արդյունքում ստացվում է, որ նույն հանձնաժողովը իր մեկ նիստում հաստատում, իսկ մեկ այլ նիստում հանկարծակի դիմում է մրցույթի տեխնիկական բնութագիրը կազմած մասնագետներին և ստանում վերոնշյալ մտացածին հիմնավորումը: Որտեղ և հարց է առաջանում՝ այդ ինչպես մրցույթը կայանալու և որպես միակ թեկնածու իմ հանդես գալուց հետո, հանձնաժողովը որոշեց դիմել մասնագիտական խորհրդին և առանց ինձ նիստերի մասին տեղեկացնելու, որոշում կայացրեց դիմել լիազոր մարմնին թույլտվություն ստանալու գնման պահանջը դադարեցնելու և ապա պատասխանը ստանալուց հետո որոշում կայացրեց դադարեցնելու գնման պահանջը:

Ուսումնասիրելով այս հանգամանքները և մրցույթի տեխնիկական բնութագիրը՝ պարզ է դառնում, որ վերոնշյալ, իրենց կողմից բերված հանգամանքները հաշվի են առնվել ի սկզբանե, և այժմ դրանք արհեստածին, անհիմն «թերություններ» են միտված դադարեցնելու գնման պահանջը: Ընդորում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, լինելով Հայաստանի Հանրապետության հեղինակավոր փորձաքննությունների կենտրոններից մեկը, որի մասնագետների սխալանքի հնարավորությունը փոքր է ցանկացած այլ կազմակերպության սխալանքի ճշգրտության չափից, ինչպես կարող է նման թերություններ ունենալ, անզեն աչքով ակնհայտ այսպիս պարզ ծրագրի տեխնիկական բնութագրում:

Զուգահեռ ուսումնասիրելով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հրապարակված տեխնիկական բնութագիրը, փաստում ենք, որ

1. այնտեղ նշված **«PC-CRUSH»** անվանումից, ակնհայտ է դառնում, որ թերությունների շարքում իրենց նշած **ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը)** արդեն իսկ նշված է եղել առավել քան ստույգ, քանզի այդօրինակ/համարժեք ծրագրերը աշխատում են թարմ, նոր թողարկված տարբերակով, և նրանք ա) կետով չեն կարող նշել այլ տարբերակ: *Օրինակ՝ եթե թողարկվել է v.8, ապա անհնարին է փեղադրել v.6-ը:*

2. այնտեղ նշված **«ծրագրի բանալի»** արտահայտությունը, խոսում է այն մասին, որ **բ) ծրագրի լիցենզիայի հավաստիության** հարցը չի կարող քննարկվել քանզի *«ծրագրի բանալի»* արտահայտությունը համարժեք է *«ծրագրի լիցենզիայի հավաստիության»* արտահայտությանը:

3. նմանօրինակ/համարժեք ծրագրերում **գ) ծրագրի տարեկան թարմացումը** համարժեք է նոր ծրագիր գնելուն և այդ մասին չէր կարող նշվել նույն տեխնիկական բնութագրում:

4. այնտեղ նշված **«Օգտատիրոջ ուղեցույցը»**, փաստում է, որ հաշվի է առնվել մասնագետների ուսուցման հարցը, իսկ հեռախոսազրույցների ընթացքում պատրաստակամություն եմ հայտնել ուսուցանել առանց լրացուցիչ գումարի, հետևաբար **դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը** կետի առաջին մասը բավարարված է, իսկ երկրորդ մասը նոր առաջացրած հանգամանք է, որտեղից ակնհայտ է դառնում, որ պետք է այս մասով լիներ այլ գնում՝ մասնավորապես ուսուցմանը համապատասխան *գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրով:*

5. նմանօրինակ/համարժեք ծրագրերը ունեն լեզուների ընտրության և ձևավորման հնարավորություն և ակնհայտը է, որ այն ևս ռուսերեն է, ինչի մասին ես հայտնել եմ նաև հանձնաժողովի քարտուղարին, այդ թվում հայտնել եմ օգտատիրոջ ուղեցույցի ռուսերեն լինելու մասին, հետևաբար **ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն)** կետը արհեստական խոչընդոտ ստեղծելու հանգամանք է:

6. այնտեղ նշված **«ծրագրի բանալի»** արտահայտությունը, խոսում է այն մասին, որ ծրագրի բանալիների քանակը մեկն է, իսկ առհասարակ խոսել

զ) ծրագրի բանալիների քանակը կետի մասին, այն էլ տեխնիկական բնութագրում, նշանակում է խոսել նույն ծրագրի մի քանի գնման մասին:

Արդյունքում՝ նախորդ անգամ ակնհայտ էր դառնում, որ ներկայացված թերությունները անհիմն էին, մտացածին, չունեին էական նշանակություն, չէին հանգեցնում ծրագրի ոչ լիարժեք օգտագործմանը և փորձաքննությունների ոչ պատշաճ կատարմանը և նպատակ ունեին մտացածին, անհիմն «թերությունների» քողի ներքո դադարեցնելու գնման պահանջը՝ ինձ հաղթող չճանաչելու և հետագայում մրցակցությունից դուրս մղելու համար:

Այսօր արդեն՝«ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով մրցույթի շրջանակներում, հաստատվում է, վերոնշյալը, քանզի նոր տեխնիկական բնութագրում (տե՛ս հավելված 5) նշվում է հետևյալը

15. Ծրագրային համալիրը պետք է ունենա ռուսերեն ինտերֆեյս, ռուսերեն լեզվով ներկառուցված տեղեկատվական համակարգ:

16. Ծրագրային համալիրի տեխնիկական աջակցությունը պետք է տրամադրվի նաև ռուսերեն լեզվով:

17. Ծրագրային համալիրը պետք է ունենա առնվազն մեկ բանալի:

18. Ծրագրային համալիրը իր մեջ պետք է ներառի տվյալ Ծրագրային համալիրի տարեկան թարմացումները:

19. Ծրագրային համալիրի արտադրության տարեթիվն առնվազն 2018 թվական:

20. Ծրագրային համալիրը պետք է ունենա լիցենզավորվորման վերաբերյալ հավաստում:

21. Ծրագրային համալիրի տրամադրման հետ համատեղ պետք է իրականացվի առնվազն 5 մասնագետների առնվազն 4 օրյա ուսուցում և որպես արդյունք տրամադրվի համապատասխան հավաստագրեր: Ուսուցման շրջանակներում ուսուցանվողների թվին համապատասխան Ծրագրային համալիրի բանալիների առկայության ապահովում՝ խմբային ուսուցումն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

Այս կետերը համեմատելով «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» ծածկագրով մրցույթի հոկտեմբերի 17-ի հանձնաժողովի նիստի արձանագրության մեջբերած կետերի հետ, հանգում ենք մի քանի հետևությունների՝

ա) **ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը),** 19 կետով նշվել է ոչ թե ծրագրի տարբերակը, այլ արտադրման տարեթիվը, ինչը նախորդ գնման ժամանակ, փաստվել է, ըստ հետևյալի նախորդ տեխնիկական բնութագրի «PC-CRUSH» անվանումից, ակնհայտ է դառնում, որ թերությունների շարքում իրենց նշած ա) ծրագրի ստույգ տարբերակը (ծրագրի նոր տարբերակը) արդեն իսկ նշված է եղել առավել քան ստույգ, քանզի այդօրինակ/համարժեք ծրագրերը աշխատում են թարմ, նոր թողարկված տարբերակով, և նրանք ա) կետով չեն կարող նշել այլ տարբերակ: Օրինակ՝ եթե թողարկվել է v.8, ապա անհնարին է տեղադրել v.6-ը, սակայն կրկին փաստենք, որ նրանք նշել են տարեթիվը և ոչ տարբերակը, հետևաբար նախորդ անգամ գնման պահանջի դադարեցման համար բերված կետը, չի համապատասխանել իրականությանը:

բ) **ծրագրի լիցենզիայի հավաստիությունը,** 20-րդ կետով բերված է լիցենզավորման վերաբերյալ հավաստումը, սակայն նախորդ տեխնիկական բնութագրում նշված «ծրագրի բանալի» արտահայտությունը, խոսում էր այն մասին, որ բ) ծրագրի լիցենզիայի հավաստիության հարցը չի կարող քննարկվել քանզի «ծրագրի բանալի» արտահայտությունը համարժեք է «ծրագրի լիցենզիայի հավաստիության» արտահայտությանը, ինչը հաստատվել էր նաև պատվիրատուի կողմից և նրանք նշել էին բանալիների թիվը կոնկրետ նշելու հանգամանքի մասին, ինչը նոր տեխնիկական բնութագրում նշված է 17 կետում, և նախորդ բնութագրի պես նշված է առնվազն մեկ բանալի ունենալու մասին:

գ) **ծրագրի տարեկան թարմացումները,** 18-րդ կետում նշված թարմեցումների հարցը, դեռ պարզաբանել եմ նախորդ անգամ՝ բողոքը քննող մարմնին ներկայացնելով, որ նմանօրինակ/համարժեք ծրագրերում գ) ծրագրի տարեկան թարմացումը համարժեք է նոր ծրագիր գնելուն: Սակայն այստեղ նրանք օգտագործել են բառախաղ, որպեսզի հիմնավորեն նախորդ ասվածը այն է, նրանք ոչ թե պետք է նշեին ծրագրի տարեկան թարմեցումը, ինչը լինել չի կարող, այլ պետք է նշեն ծրագրի տվյալ տարբերակի ընթացիկ թարմեցումները:

ե) **ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն)**, 15-րդ կետով նշված Ծրագրային համալիրը պետք է ունենա ռուսերեն ինտերֆեյս, ռուսերեն լեզվով ներկառուցված տեղեկատվական համակարգ, նախորդ անգամ նշել եմ, որ նմանօրինակ/համարժեք ծրագրերը ունեն լեզուների ընտրության և ձևավորման հնարավորություն և ակնհայտ է, որ այն ևս ռուսերեն է, ինչի մասին ես հայտնել եմ նաև հանձնաժողովի քարտուղարին, այդ թվում հայտնել եմ օգտատիրոջ ուղեցույցի ռուսերեն լինելու մասին, հետևաբար ե) ծրագրի օգտագործման լեզուն (ռուսերեն) կետը արհեստական խոչընդոտ ստեղծելու հանգամանք էր նույնպես, ինչը փաստվեց:

դ) **մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը,** նախորդ գնման ժամանակ տեխնիկական բնութագրում նշված «Օգտատիրոջ ուղեցույցը», փաստում էր, որ հաշվի է առնվել մասնագետների ուսուցման հարցը, իսկ նախորդ հեռախոսազրույցների ընթացքում պատրաստակամություն էի հայտնել ուսուցանել առանց լրացուցիչ գումարի, հետևաբար դ) մասնագետների ուսուցումը և որպես արդյունք համապատասխան հավաստագրի տրամադրումը կետի առաջին մասը բավարարված է, իսկ երկրորդ մասը նոր առաջացրած հանգամանք է, որտեղից ակնհայտ է դառնում, որ պետք է այս մասով լիներ այլ գնում՝ մասնավորապես ուսուցմանը համապատասխան գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրով, ինչը հաստատել է բողոք քննող մարմինը ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի շրջանակներում:

Վերոնշյալը փաստում է, որ նոր տեխնիկական բնութագրում, չկան այն փոփոխությունները, որ պետք է կատարվեին, այլ դրանք առկա են մանիպուլիատիվ ձևերով և շփոթեցնող բառախաղերով, այդ թվում ՀՀ կառավարության 13 ապրիլի 2017 թվականի N 390-Ն որոշման «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳ»-ի խախտմամբ և բողոքը քննող մարմնի հորդորների անտեսմամբ:

Սույն գործընթացը փաստում է նախորդ գնման պրոցեսում պատվիրատուի արհեստածին ստեղծած խոչընդոտները, գնահատող հանձնաժողովին թույլ տալով նմանօրինակ խախտումներ, որը ենթադրյալ նպատակ է ունեցել այլ հանգամանքներում և այլ պայմանավորվածություններով իրականացնել մրցույթը, ինչը և տեղի ունեցավ:

ՀՀ կառավարության 13 ապրիլի 2017 թվականի N 390-Ն որոշման «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳ»-ի խախտումը ունի մեկ նպատակ, այն է՝ երկու տարբեր գնման միջանցիկ կոդ ունեցող գնումները մեկ կոդի ներքո իրականացնելը, նախորդ մրցույթի համեմատ նախահաշվային գինը արհեստական բարձրացնելու, այն է 5 մլն դրամից անցկացնելու, համար, որպեսզի առաջ գա որակավորման չափանիշների պարտադիր պահանջման հանգամանք, քանզի դեռ նախորդ գնումից, պատվիրատուն տիրապետել էր կոմերիցոն գաղտնիքի, այն է որ Ջանիկ Սևայանը չունի համանման պայմանագիր, և գնման նախահաշվային գինը 5 մլն դրամից բարձր հաշվարկելու պարագայում, նա չի կարող ներկայացնել որակավորման չափանիշներ և դուրս կմնա մրցույթից: Ընդ որում, նախահաշվային գինը 5մլն գերազանցում է սիմվոլիկ 390000 դրամով: Հենց այս կարգի խախտումն է, որ առաջ է բերել որակավորման փաստաթղթերի պահանջ և հանգեցրել նման անօրինական արդյունքի:

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-18/02» մրցույթի գործընթացում ձևավորած մասնագիտական խորհրդի կողմից ներկայացված «թերություններ»-ը, որոնցով նոր գնման պահանջի դեպքում պետք է

ձևավորվեր տեխնիկական նոր բնութագիրը և հիմք ընդունելով վերը նշված դրույթի վերլուծությունը՝ ուղղակիորեն պարզ է, որ ըստ օրենքի, նույնիսկ ապագա հրավերում չէին կարող պարունակվել այնպիսի դրույթներ, որոնք կսահմանափակեին այս կամ այն մասնակցի մրցունակությունը, դրանք չէին կարող լինել խտրական և չէին կարող ներկայացնել հնարավոր մասնակիցներին ուղղված այնպիսի պահաջներ, որոնք կպարզեցնեն կամ կբարդացնեն գործընթացը: Սակայն, վերոնշյալ կետերը խախտմամբ ներառված են, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի հոդված 6-ի 4-րդ կետի 2-րդ մասը խախտվել է տեխնիկական բնութագրի 21 կետով, սակայն որը, այլ միջանցիկ կոդ ունենալու առնչությամբ, չպետք է ներառվեր այս տեխնիկական բնութագրում:

Բողոքարկման խորհրդի հարգելի անդամ

Համառոտ Ձեզ եմ ներկայացնում օրենքի և կառավարության որոշումների այն կետերը, որոնք խախտվել են.

- ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն կարգի 45-րդ կետը,
- «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը,
- ՀՀ կառավարության 13 ապրիլի 2017 թվականի N 390-Ն որոշումը «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳ»-ի ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԻ կառուցվածքը, կազման ձևը,
- «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի հոդված 6-ի 4-րդ կետի 2-րդ մասը

Վերոնշյալ դեպքերի առնչությամբ գրավոր տեղեկացրել եմ նաև ՀՀ Ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին և սույն գործի հետ առնչություն ունեցող լիազոր մարմինների ներկայացուցիչներին:

Հաշվի առնելով վերոնշյալ խատումները, ինչպես նաև ՀՀ կառավարության 13 ապրիլի 2017 թվականի N 390-Ն որոշման «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ՁԵՎԸ, ԴՐԱ ԼՐԱՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳ»-ի ակնհայտ անտեսումը ***սույն բողոքով խնդրում եմ***

քննել գործը և իմ կողմից ներկայացված փաստաթղթերը ճանաչել պատշաճ,

չեղարկել «ՓԱԲ-ԳՀԾՁԲ-19/01» ծածկագրով ընթացակարգը և պարտավորեցնել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-

ին հրապարակելու նոր հրավեր, որտեղ մեկ մրցույթի շրջանակներում տարբեր չափաբաժիններով կհայտարարի գնման առարկաների պահանջի մասին, ըստ օրենքի, այն է՝ տարբեր միջանցիկ կոդերով և ֆինանսական միջոցներով՝ այս կերպ պահպանելով օրենքը և կարգը:

Կից ներկայացնում եմ

- ՀՀ ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին բողոքը ներկայացնելու համար պահանջվող 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը,
- անձնագրիս պատճենը,
- Հայաստանի Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանից քաղվածք առ 2018-11-02-ի պատճենը,
- Հավելվածները,
- 2018 թվականի հոկտեմբերի 22-ին բողոքը քննող մարմնին ներկայացված ԳԲԽ-ԱՄ-2018/89 բողոքի պատճեն:

Հարգանքներով և
կանխավ շնորհակալությամբ՝

ԴԻՄՈՂ՝ **Ջանիկ ՍԵՎՈՅԱՆ**

25.03.2019 թ.

Բողոք-դիմումի էջերի քանակը՝ 18